

ԶԱՐՏՈՆԿ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN

زارتونك جريدة سياسية أرمنية

72րդ Տարի, թիւ 57 (19,788)

Հինգշաբթի, 9 Յուլիս 2009

8 էջ

1000 L.Ո.

Ռանկոսթեթ
ՌԱՏԻՕ ՍԵՎԱՆ-ը
 Լիբանանի բոլոր շրջաններում մեջ,
 հետեւեալ ալիքներում վրայ

- * Լիբանանի եւ Սուրիոյ ծովեզերեայ շրջաններում, Լեռնալիբանանի, Պեքաշի, Սալտայի եւ Թրիփոլիի մեջ՝ 101.5 FM ալիքին վրայ:
- * Հիւսիսային Լիբանանի մնացեալ շրջաններում մեջ 101.3 FM ալիքին վրայ:
- * Պելլուսի եւ Լեռնալիբանանի մեջ Լատե՝

Հեռ.: 01-567161-2-3 90.8 FM ալիքին վրայ:
Fax: 01-567186

* Cablevision 11700 GHz digital.
 * Կայքէջ: www.radiosevan.com

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԱՊԻՔ ՊՐՐԻ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Երեկ խորհրդարանի նախագահ Նապիի Պրրի իր շաբաթական ասանդական այցելութիւնը տուաւ նախագահ Չօր. Միշէլ Սըլէյմանի: Խորհրդակցութիւնները ընդգրկեցին երկիրը յուզող զանազան հարցեր, մասնաւորաբար դահլիճի կազմութիւնը:

Հանդիպումի ասարտին Նապիի Պրրի պատասխանելով հարցումի մը կառավարութեան կամաւորման ուշացումի կապակցութեամբ, ըսաւ.

- Տակաւին արտօսուած ժամկետի սահմաններու մէջ եւք: Յիշենք թէ նախկին կառավարութեան կազմաւորումը 58 օր տեւեց, մինչ այս անգամ ընդամենը 10 օր անցած է տակաւին: Սա չի նշանակեր, թէ նոր կառավարութեան կազմաւորումը երկար ժամանակ պիտի իլէ: Լաւատեսութեամբ զինուեցէք եւ արդիւնքը պիտի ունենաք:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վարչապետ Սաատ Հարիրի կազմութեան գործը: Լիբանանեան կառավարութիւն մը կազմելու իր ճիգերը կեդրոնացուցած է մեծամասնութիւնը եւ ընդդիմութիւնը գոհացող դահլիճ մը գոյացնելու բանակցութիւններու վրայ:

Դիւանագիտական կարգ մը աղբիւրներու համաձայն, վարչապետ Հարիրի որոշ դժուարութիւններ կը դիմագրաւէ շրջանին մէջ տիրող անհամաձայնութիւններու պատճառաւ, ինչ որ կրնայ ուշացնել նոր դահլիճի կազմաւորումը:

Այլ աղբիւրներ կը նշեն, թէ լիբանանեան տարբեր կողմերու միջեւ մօտալուտ բանակցութիւններ տեղի կրնան ունենալ, որոնք կոչուած են դիւրացնելու դահլիճի

ԿԻՊՐՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԱԾ ԵՐԵՒԱՆԻ ՈՍԿԵԱՅ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Հայաստան կատարած իր պաշտօնական այցելութեան ընթացքին Կիպրոսի նախագահ Տիմոթիոս Խրիստոֆիասը եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը այցելած են Երեւանի քաղաքապետարան, ուր կազմակերպուած էր հանդիպում Երեւանի քաղաքապետին եւ պատուաւոր քաղաքացիներու հետ: Այսպիսով, Կիպրոսի նախագահը կը դառնայ առաջին պետութեան նախարարը, որ կ'այցելէ Հայաստանի մայրաքաղաքի քաղաքապետարանը: Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարեան նախագահ Խրիստոֆիասը պարգևատրած է Երեւանի ոսկեայ շքանշանով, ինչպէս նաեւ պատկերազարդ ակտով նուիրած է Երեւանի մասին:

Իր կարգին, Կիպրոսի նախագահը քաղաքապետ Բեգլարեանին նուիրած է յուշանուէր նաակ մը, որ կը խորհրդանշէ Կիպրոսի վերամիաւորումը եւ Կիպրոսի խնդրի խաղաղ լուծումը: Կիպրոսի նախագահը այցելած է նաեւ Երեւանի պատմութեան թանգարան, ուր գրառում կատարած է յուշամատենանին մէջ:

ՊԱՆ ԶԻ ՄՈՒՆ ՄՏԱՅՐՈԳ ԼՐՏԵՍԱԿԱՆ ՑԱՆՅԵՐՈՒ ԿԱՊԱԿՅՈՒԹԵԱՄԲ

Մ.Ա.Կ.ի Ապահովութեան Խորհուրդի մնայուն անդամներուն ուղղուած հերթական տեղեկագրին մէջ Պան Զի Մուն իր մտահոգութիւնը արտայայտեց Լիբանանի մէջ իսրայելեան լրտեսական ցանցերու յայտնաբերման կապակցութեամբ, այդ երեւոյթը համարելով 1701 Մ.Ա.Կ.ի բանաձեւի լուրջ խախտում, որ կրնայ վտանգաւոր դառնալ Հարաւային Լիբանանի մէջ կայուն վիճակ մը ստեղծելու Մ.Ա.Կ.ի թափած ճիգերուն:



ԱԶՆԱԻՈՒՐ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնաւուր, որ Լիբանան կը գտնուի Պեյթետտիկի Փառատօսին իր մասնակցութիւնը բերելու կապակցութեամբ, երեկ առաւօտեան այցելեց Պապատայի նախագահական պալատ, ուր հանդիպում ունեցաւ նախագահ Չօր. Միշէլ Սըլէյմանի հետ:

Բարձր գնահատելով Ազնաւուրի վաստակը, մշակոյթի մասնաւորաբար երգարուեստի մարզին մէջ, նախագահ Սըլէյման անուանի երգահան-երգիչը պարգևատրեց լիբանանեան իրագործումներու առաջին կարգի շքանշանով:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կատարուեց Ս. Աննա Եկեղեցու եւ Կաթողիկոսական Երեսանեան Նստավայրի Հողօրհնէքի Արարողութիւնը

Յուլիսի 4-ին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայութեամբ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Տիար Սերժ Սարգսեանի կատարուեց Երեսանի Ս. Կաթողիկէ Եկեղեցուն յարակից Ս. Աննա Եկեղեցու եւ Վեհափառ Հայրապետի երեսանեան նստավայրի հողօրհնէքի արարողութիւնը: Եկեղեցին եւ կաթողիկոսական նոր նստավայրը կառուցում են Հայ Առաքելական Եկեղեցու ազգային բարերար տէր եւ տիկին Հրայր եւ Աննա Հովնանեանների մեկենասութեամբ եւ ճարտարապետ Հրաչ Պողոսեանի նախագծով:



Նորին Սրբութիւնը շարականների երգեցողութեան եւ աղօթքների ներքոյ կատարեց հողօրհնէքը:

«Մի քանի տարիներից Մենք ուրախութիւնը պիտի ունենանք կատարելու օծումը Ս. Աննա Եկեղեցու, որտեղ Մեր գաւակունք պիտի գան իրենց հայցն ու աղօթքն առ Աստուած բարձրացնելու՝ յանուն մեր Հայրենիքի անասանութեան, յանուն մեր ժողովրդի օրհնեալ եւ բարօր կեանքի: ... Ս. Աննա Եկեղեցու կառուցմամբ վերանորոգեալ եւ բարեզարդ վիճակում պիտի տեսնենք Ս. Կաթողիկէ Եկեղեցին, որին հասցում վերբերը մեր ժողովրդի հոգու վրայ բացում վերբերն են: Մենք հաւատում ենք, որ այդ վերբերի ամբողջում մեր ազգային կեանքը պիտի լինի առաւել լուսաւոր, պայծառ ու աստուածահաճոյ: Մենք պիտի ապրենք մշտապէս փառք, գոհութիւն եւ օրհնութիւն Երկնաւորին մատուցելով, ով սերն է առատացնում մեր մէջ, օրհնութիւնն ու բարօրութիւնը Մեր ազգի»,- սրբազան արարողութիւնից յետոյ ասաց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իր օրհնութեան խօսքն ուղղելով ներկաներին:

Նորին Սրբութիւնը նշեց, որ խորհրդային անաստուածութեան տարիներին Ս. Կաթողիկէ Եկեղեցին մայրաքաղաքի միւս Եկեղեցիների նման կիսեց քանդուելու եւ փլուզուելու դառն ճակատագիրը, բայց Տիրոջ ողորմութեամբ պահպանուած նրա մի հատուածը երկար տարիներ արդէն ծառայում է հայ հաւատացեալներին. այստեղ շարունակում է հնչել հայ քրիստոնեայի աղօթքը, կատարում են Եկեղեցական արարողութիւններ:

Հայոց Հայրապետն իր շնորհակալութիւնը յայտնեց ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանին, ում աջակցութեամբ իրականութիւն դարձաւ Սբ. Կաթողիկէ միջնադարեան Եկեղեցու կողքին Եկեղեցական նոր համալիրի կառուցումը: Վեհափառ Հայրապետը շնորհակալութիւն յայտնեց նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին, ում ներկայութիւնն արդէն իսկ վկայում է Հայ Առաքելական Եկեղեցու հանդէպ ՀՀ նախագահի ուշադրութեան եւ նախանձախնդրութեան մասին: Նորին Սրբութիւնն իր գնահատանքն ու օրհնութիւնը բերեց նաեւ արարողութեանը ներկայ տէր եւ տիկին Հրայր եւ Աննա Հովնանեաններին, ովքեր մեծ նուիրումով իրենց օգտակարութիւնն են բերում Հայոց Եկեղեցուն եւ մեր նորանկախ պետութեանը:

Հողօրհնէքի արարողութեանը ներկայ էին Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեանը, Երեսանի քաղաքապետ Գագիկ Բեգլարեանը, Մայր Աթոռի միաբաններ, Գերագոյն Հոգեւոր խորհրդի անդամներ, ազգային բարերար Վահագն Յովնանեանը, բազմաթիւ հաւատացեալներ:

ՀՀ ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՅԸ ՊՈՍՏՈՆ

Յուլիսի 1-4-ը Նիւ Եորքում Հայ բժիշկների համաշխարհային համաժողովների աշխատանքներին մասնակցելու նպատակով, ԱՄՆ եր մեկնել ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը: Մինչ այդ, նա այցելել է Պոստոն եւ Ֆիլատելֆիա, մի շարք հանդիպումներ է ունեցել տեղի հայ համայնքի, համայնքային հաստատութիւնների ներկայացուցիչների հետ:

ՀՀ սփիւռքի նախարարը՝ Ամն-ում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Թաթուլ Մարգարեանի ուղեկցութեամբ նախ այցելել է Թէքեան մշակութային միութեան «Պայքար» հաստատութիւն, հանդէս եկել մամլոյ ասուլիսով, որին մասնակցել են Արեւելեան Ամերիկայի հայկական անգլիատառ թերթերի՝ «Տը Արմինիըն Միրրըր Սփեքթէթըրի», «Արմինիըն Ուիքլիի», «Հայրենիք» շաբաթաթերթի եւ Պոստոնի Անկախ ռադիոկայանի ներկայացուցիչները: Տիկին Յակոբեանը հանգամանօրէն ներկայացրել է ՀՀ սփիւռքի նախարարութեան ստեղծման անհրաժեշտութիւնը, առ այսօր նախարարութեան կատարած աշխատանքները, արդէն իրականացում եւ իրականացուելիք ծրագրերը: Նրանք յատկապէս հետաքրքրուել են երիտասարդութեանը վերաբերող ծրագրերով: Աւելի քան երկու ժամ տեւած մամլոյ ասուլիսի ընթացքում ՀՀ սփիւռքի նախարարը պատասխանել է սփիւռքահայ լրագրողներին հետաքրքրող հարցերին եւ կոչ արել ակտիւ համագործակցութեան՝ նախարարութեան կառուցում-քային ստորաբաժանումների հետ, որոնք, ըստ նախարարի, ՀՀ սփիւռքի նախարարութեան կայք էջի եւ «Հայերն այսօր» էլեկտրոնային թերթի միջոցով, Սփիւռքի բոլոր գաղթօջախներին տրամադրում են անհրաժեշտ տեղեկատուութիւն՝ նախարարութիւնում մշակուող եւ իրականացուող բոլոր ծրագրերի վերաբերեալ:

Այնուհետեւ Հրանոյշ Յակոբեանն այցելել է Ս. Յակոբ Եկեղեցի, Հայամերիկեան թանգարան-գրադարան, որն ազգային լուրջ արժէք ներկայացնող հայկական կառոյց է: Բննարկուել է Հայաստանի հետ կապերի ուժեղացման, ծրագրերի իրականացման, Հայաստանում գործընկերներ ունենալու խնդիրներ: Նախարարը հանդիպում է ունեցել «Արմինիըն ՀերիթէՅճ ՖաունտէյՅն»-ի վարչութեան անդամների հետ, որոնք նախարարին ներկայացրել են Պոստոնում կառուցուելիք Եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած յուշարձանի նախագիծը եւ կառուցման նախապատրաստական աշխատանքների ընթացքը:

ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը հանդիպել է Պոստոնի հայ համայնքի 32 կազմակերպութիւնների 100-ից անէլի ներկայացուցիչների հետ: Ներկաներին խանդավառել է յատկապէս Հրանոյշ Յակոբեանի հիմնաւոր խօսքը՝ Հայաստան-սփիւռք գործակցութեան զարգացման ներկայիս լայն հնարաւորութիւնների, աշխարհասփիւռ հայերի՝ Հայրենիքի շուրջ համախմբման անհրաժեշտութեան, Սփիւռքի ազգային, կրթամշակութային ու մարզական կառոյցների, սփիւռքահայ անհատների կողմից համայն հայութեան Հայրենիք Հայաստանին ցուցաբերուող օժանդակութեան կարեւորութեան, Սփիւռքում հայապահպանութեան յոյժ կարեւոր խնդրի վերաբերեալ շահագրգիռ մօտեցումների, Հայաստանից Սփիւռքի հայկական դպրոցներ դասագրքերի առաքման, արդէն մեկնարկող «Արի Տուն» ծրագրի հայապահպան նշանակութեան եւ ՀՀ սփիւռքի նախարարութեան իրականացրած ամենատարբեր ծրագրերի վերաբերեալ:

Նախարարն իր խօսքում ասել է, որ Հայաստանն աշխարհում սփռուած 7 միլիոն դեսպան ունի, որոնցից իւրաքանչիւրը պէտք է նպաստի Հայրենիքի զօրացմանը:

ՀՀ սփիւռքի նախարարը եղել է նաեւ Պոստոնի Անկախ ռադիոկայանում եւ ուղիղ եթերում պատասխանել ռադիօնկնդիրների հարցերին:

Բաւականին յագեցած ծրագրի շրջանակներում, ՀՀ սփիւռքի նախարարն այցելել է նաեւ Հայ Օգնութեան Միութիւն եւ հանդիպում ունեցել վարչութեան անդամների հետ, տեսակոնֆերանսի ձեւով հանդիպմանը մասնակցել են նաեւ Գամատայի եւ Արգենտինայի հօմուիները: Պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել կնքել յուշագիր նախարարութեան հետ՝ Հօմ-ի 100-ամեակին նուիրուած տօնակատարութիւնները Հայաստանում անցկացնելու նպատակով:

Յաջորդ օրը տիկին Յակոբեանը Պոստոնից մեկնել է Ֆիլատելֆիայ եւ մի շարք հանդիպումներ ունեցել տեղի հայ համայնքային կառոյցների ներկայացուցիչների, ուսուցիչների հետ: Համայնքում յայտնի գործիչ Բաբկէն Սլրեանի տանը կազմակերպուել է նախարարի հետ համայնքի ներկայացուցիչների հանդիպումը: Հանդիպումն անցել է ջերմ եւ հետաքրքիր մթնոլորտում: Նոյն օրը երեկոյեան նախարարը մեկնել է Նիւ Եորք՝ մասնակցելու հայ բժիշկների համաժողովին:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐՋԱՑԱՆ, ԿԱՐԵԼԻ՞ Է ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԶԻ ՄԱՍԻՆ ՄՏԱԾԵԼ

Լիբանանեան «Յունիսեան ընտրութիւններ»ը խերով-բարով վերջացան, առանց լուրջ միջադէպերու: Տեղի ունեցած միօրեայ քուէարկութիւնները, ընտրական տաղտուկները, այդ առիթով արտասանուած փոխադարձ արտայայտութիւններն ու դրսեւորումները (գունաւոր ու շոկալից, երբեմն վիրաւորական նոյնիսկ), բարեբախտաբար մնացին ետեւ: Այսինքն, այդ բոլորը կը պատկանին այլեւս երէկին: Ի՞նչ լաւ է, որ այդպէս է:

Այսօր, ակնարկութիւն կատարել ընտրութիւններուն, արդիւնքներուն, եւ նոր-նոր մեկնաբանութիւններ ընել, այսպիսով կրկին անգամ հրահրել ու տեղի տալ ըսի-ըսաներու, բնականաբար մեզի համար պիտի ըլլայ աւելորդաբանութիւն, ժամավաճառութիւն եւ կիրքերու աւելորդ բարբոքում, որոնց անդրադառնալ իրապէս անհիմաստ է գէթ ներկայ հանգրուանին:

Ինչ որ ալ ըլլան ընտրութեան թողած արդիւնքները (նպաստաւոր կամ աննպաստ), երբ պահ մը մտածենք թէ ընտրութիւններէն յաղթող դուրս եկող «երկու առաւել չորս», կամ «չորս առաւել երկու» երեսփոխանները բոլորն ալ հայեր են, ու կը պատկանին հայութեան, հո՛ն մեր մտահոգութիւնները կը փարատին ինքնաբերաբար ու վերջնականօրէն, եւ ուրեմն կը փոխուին նաեւ բոլորիս տրամադրութիւնները (կամ պէտք է փոխուին), կամայ-ակամայ, երբ մտածենք հաւաքական շահի մասին ու դուրս գանք նեղ պատկանելիութենէ:

Կը խորհիմ, թէ լաւագոյնս գիտակցել էտք ընտրութեան հետ կապուած դէպքերուն ու պատահարներուն, նամանաւանդ նկատի առած բազում հաշի ու խնդիր՝ կապուած մեր գաղութի աօրեային հետ, մեզի համար այսօր անհրաժեշտ է պահ մը մոռնալ անցեալը (մօտիկ թէ հեռաւոր) եւ որդեգրել նոր ուղիներ, նոր քաղաքական ուղեգիծ, մեր յիշողութիւններէն հեռացնելով հանդերձ անցեալի հետ առնչուած ամէն տխուր իրավիճակ, որ կրնայ ստեղծել բացասական ու ժխտական վիճակ:

Այսօր, բոլոր ժամանակներէն աւելի հրամայական պահանջք է որպէսզի ընտրութեան ընթացքին մրցակցող ու ճակատող կողմեր, (ըլլան անոնք կուսակցութիւններ կամ միութիւններ, նախարարներ կամ երեսփոխաններ), դիմեն բոլորովին նոր ու շինիչ քայլերու, եւ փորձեն առաջ քշել մէկտեղուելու, միաբանելու, համերաշխօրէն ընթանալու ո՞ն ու քաղաքականութիւն, եթէ կը հաւատանք լիբանանահայ գաղութի այսօրուայ դրութեամբ ունեցած կացութեան, անոր այժմու տագնապներուն, անոր սպառնացող բազում մարտահրաւերներուն:

Երբ կ'արտայայտուիմ գաղութի դիմագրաւած դժուարութեանց ու անոր առջեւ ծառայող բազմապիսի խոչընդոտներու մասին, չեմ կրնար միաժամանակ չանդրադառնալ նաեւ ընտրութիւններու ժամանակ (հին կամ նոր) եւ անկէ ետք զանազան քրիստոնէայ ղեկավարներու կողմէ Լիբանանահայութեան հասցէին ուղղուած արտայայտութիւններու մասին (երբեմն թերեւս ուղղուած մէկ կողմի հասցէին միայն), երեւոյթ մը, որուն վրայէն շատ բնականաբար չենք կրնար անցնիլ աննկատ, ու անշուշտ պարագայ մը որ հեշտութեամբ չի կրնար վրիպիլ մեր բոլորին ուշադրութիւնէն եւս, առանց իր անդրադարձը ունենալու... որ մտածել կուտայ մեզի, որպէսզի ապագայի նկատմամբ միաւորենք մեր հայկական մարդուժը եւ կարողականութիւնը, հանդէս գալու համար «Մէկ յայտարարի կամ մէկ հովանոցի» տակ... ինչո՞ւ չէ՞ մէկ ընտրացանկով, միայն:

Իրաքանչիւր գիտակից ու տագնապող լիբանանահայ, եւ վստահ եմ որ մտահոգութեամբ հետեւեցաւ այդօրինակ արտայայտութիւններուն եւ ակամայ ունեցաւ ամիսսանք... միշտ ակնկալելով ու յուսալով, թէ լիբանանահայ գաղութի համար էականը ո՛չ թէ մի քանի երեսփոխանական աթոռներն են, այլ գաղութի ընդհանուր արժանապատուութիւնը, որուն համար այսօր անհրաժեշտութիւն է միակամ կեցուածք եւ առողջ դիրքորոշում, գէթ յետայսու միակամ մտածելու, շարժելու եւ՝ գործելու:

Ծի՛շո՛ղ է, թէ քաղաքականութեան մէջ «մնայուն բարեկամ կամ մնայուն հակառակորդ» նշանաբանները գոյութիւն չունին, բայց երբեմն, կը հաւատանք թէ քաղաքականութեան մէջ ալ «թերեւս» հարկաւոր է որոշ պարկեշտութիւն՝ բնութագրելու եւ հետապնդելու համար հաւաքական շահ կամ նպատակ... որմէ բացառաբար հենու են լիբանանցի քաղաքագէտ-բանգէտները, որոնց հոտառութեան սահմանները չեն անցնիր իրենց քիթերուն ծայրերը: Անշուշտ սա՛ ուրիշ հաշի, ուրիշ հանգամանք է: Առայժմ անցնինք, առանց գրգռելու զգացումները:

Ուստի, ապրել էտք քաղաքական ասեկոսներով յղի ժամանակաշրջան մը, ազգային շահը բոլորովին գերակշիռ ու գերադաս համարելով, ու նկատի ունեցած մօտիկ անցեալի մէջ պատահած ամէն անցուդարձ, հայ դասական երեք կուսակցութիւններու ղեկավարներէն այսօր անշապաղ կ'ակնկալուի արագ դիրքորոշում, առանց ժամանակ կորսնցնելու հաւաքական կլոր սեղան, միայն ու միայն նայելու համար առա՛ջ, ծրագրելու համար նոր «ճամբու քարտէս» անշուշտ նկատի առած հայ զանգուածներու կամ հայ համայնքի ապագայ գոյակեցութիւնը:

Լիբանանէ ներս տիրող քաղաքական-տնտեսական կացութիւնը քննարկելով, նաեւ նկատի առած մեր ժողովուրդի այսօրուայ ճգնաժամի մէջ դիմագրաւած բազում դժուարութիւնները, հարկաւոր է վճռականօրէն մէկդի թողուլ ամէն փոքրիկ հաշի, «մեծամասնական ու փոքրամասնական» երկփեղկող երեւոյթ, (որ երբեք պայմանաւորուած չէ ընտրական թիւերու ցուցակներով), ու կառուցողական բարի տրամադրութիւններով տալ ձեռք-ձեռքի եւ դուրս գալ ամլացած ու լնացած ներկայ կացութիւնէն, որ այսպէս շարունակելու պարագային երբեք յոյս չի ներշնչեր՝ ապագայի իմաստով:

Ապահովաբար, ազգովին մօտէն տեսնել է ու համոզում գոյացնել էտք մեր գաղութի հետ առնչուած ամէն այժմու հաւաքական երեւոյթ, բարձրաձայն կրնանք յայտարարել, որ յետայսու, հայ ժողովուրդի ներկայացուցիչներուն համար (անխտիր), նամանաւանդ ճակատագրական ու ճգնաժամային պարագաներու տակ, դաս քաղել էտք «կատարեալ անցեալ»էն, փափաքելի չէ ինքնանպատակ, զարտուղի ու բեւեռացեալ աշխատանք:

Որքա՞ն գեղեցիկ, տպաւորիչ, արդիւնաւետ ու բացառիկ պիտի ըլլար պատկերը, եթէ նախընտրուած ըլլար համախոհական մօտեցում, միակամ գործունէութիւն ու արժանապատի կեցուածք... ու միաբանութեամբ ընտրուած ըլլային «վեցեակ»ը, գէթ խնայած ըլլալով մեր զանգուածները, ու փաստելու՝ թէ հայութիւնը գիտէ՛ միաբանիլ: Արդեօ՞ք կրնանք անգամի մը համար ներդաշնակել հայկական խճանկարը...: Ի՞նչ բան կ'արգիլէ մեզի...:

Արդարեւ, միշտ աչքի առաջ ունենալով Միջին Արեւելքէ ներս օրերու տեղի ունեցող քաղաքական վերիվայրումներն ու փոփոխութիւնները, եւ փշող քամիներու ու ժգնութիւնն ու ահագնութիւնը, այսօր մեզմէ իրաքանչիւրէս կը պահանջուի անկեղծ, թափանցիկ ու վստահելի վերաբերմունք ու փոխարարութիւն, կերտելու համար մեր յառաջիկայի հաւաքական աշխատանքը, որմով պայմանաւորուած է գաղութային համախոհութիւն եւ ընթացք:

Կարիքը չկայ յետադարձ ակնարկով կամ հայեացքով անցեալ փորփրել: Անցեալը իր տխուր երեսներով թող դասալից պատուիրան հանդիսանայ մեզի, որմէ քաղուած դասը թող ծրագրէ համայնքի նոր արեւելումը:

Հակառակ պարագայի՞ն... սերունդներ վաղը բարձրաձայն պիտի գոռան, ծիծաղելով մեր ազգասիրութեան ու հայրենասիրութեան վրայ, ըսելով.

- Ընտրութիւնը անցաւ, բայց հայուն ցարը... չանցաւ...
Դեղահա՛տը...: Պէտք է զայն փնտռել աթոռներ գրաւած ղեկավարութեանց մօտ...: Ժողովուրդը, մէկ բան կը սպասէ՝ «միասնականութիւն»...:

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԷՍ

Տարիներ կ'անցնին, սերունդներ կը փոթին ու հասակ կ'առնեն հայկական վարժարաններու երդիքին տակ, հայեցի դաստիարակութեամբ թրծուած եւ հարուստ գիտելիքներով օժտուած:

Այս վարժարաններէն մին է Հ.Բ.Ը.Մ.-ի Լեւոն Կ. Նազարեանը:

Այս տարի մեր վարժարանը իր 47-րդ հունձքի ասարտական հանդէսով փակեց 2008 - 2009 դպրոցական տարեշրջանը:



Սոյն հանդէսը տեղի ունեցաւ 28 Յունիս 2009, Կիրակի առաւօտուն, ժամը 11:00-ին, Հ.Ե.Ը.Ի Զ. Մովսէսեան հանդիսասրահին մէջ:

Այս հանդիսութիւնը կը վայելէր բարձր հովանաւորութիւնը Հ.Բ.Ը.Մ.ի Պատկառելի Կրթական Յանձնախումբի եւ ներկայութիւնը՝ Հ.Բ.Ը. Միութեան Կրթական Ծրագիրներու մեծապարգ Տնօրէն՝ Տիար Արթուր Համալեանի, Կրթականի ազնուափայլ ատենապետուհի՝ Տիկ. Սիլվա Լիպարիտեանի եւ անդամուհիներու, Ծրջանակային Յանձնաժողովի փոխ ատենապետի՝ Տիար Կարօ Ճղըլեանի, տնօրէններ՝ Տիար Փիրայր Դանիէլեանի եւ Տիկ. Մարալ Պալեօզեանի եւ վարժարանի նախկին տնօրէն՝ Տիար Հանրի Ուրֆալեանի եւ յարգարժան հիւրերու եւ ծնողներու:



Ծրջանաւարտ - շրջնաւարտուհիներու հանդիսաւոր մուտքէն ետք սկսաւ գեղարուեստական յայտագրի գործադրութիւնը: Տիկին Նորա Եղիայեանի ղեկավարութեամբ շրջանաւարտները երգեցին Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Բ.Ը.Մ.ի քայլերգները: Որոնցմէ ետք Տիկին Յասմիկ Տեմիրճեան բացման խօսքով ելոյթ ունեցաւ, ապա աշակերտական յայտագիրը շարունակուեցաւ «Մեսրոպաշունչ» խմբային արտասանութեամբ, որուն կ'ընկերակցէր «Տէրմնական Աղօթք»-ին քաղցրահնչին մեղեդին ու անոր համապատասխան նկարներու ցուցահանդէս մը LCD Projector-ի վրայ: Արտասանութեան յաջորդեց արաբերէն խմբերգ մը՝ Րահպէնիական երգերու համադրութիւն մը:

Խնամքով պատրաստուած եւ այլազանութիւն ներկայացնող այս յայտագրի ընթացքին մերթ ընդ մերթ կատարուեցան հայերէն, արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով արտասանութիւններ, որոնք բոլորն ալ մեծ յաջողութեամբ մեկնաբանուեցան եւ իրենց իմաստալից բովանդակութեամբ խանդավառեցին ներկաները:

Նոյնքան խանդավառող ելոյթներ էին հայկական երիտասարդական պար՝ «Ծաղկած Պալենին», վրացական «Կինտոներու» պարը եւ յատկապէս արաբական «Տապէն», որոնք հակառակ կատարողներու մատողաշ տարիքին կատարուեցան անթերի եւ գովելի կարգապահութեամբ, շնորհիւ Տիկին Հայրիկ Ճէրճեանի ջանքերուն:

Գեղարուեստական ելոյթներուն առընթեր մէջ ընդ մէջ ընթերցուե-

ցան ուղերձներ՝ Անգլերէն լեզուով (Կարէն Ատալեան), Արաբերէն լեզուով (Կարօ Անթոնեան) եւ Հայերէն լեզուով (Հորի Փամկոչեան), որոնցմէ իւրաքանչիւրը իր շրջանաւարտ ընկեր - ընկերուհիներուն թարգմանը հանդիսանալով հրաժեշտ տուաւ իր նախակրթարանին, երախտագիտութիւն ու շնորհակալութիւն յայտնեց Հ.Բ.Ը.Մ.ի ղեկավարներուն, վարժարանի տնօրէնութեան, ուսուցչական կազմին ու ծնողներուն, խոստանալով ըլլալ Հ.Բ.Ը. Միութեան Լեւոն Կ. Նազարեան վարժարանին հպարտութիւն առթող հայ ուսանող մը..:

«Պարի ու երգի» ելոյթի ընթացքին կատարուեցաւ շատ յուզիչ ու խորհրդաւոր «Ջահի փոխանցումը»: Նոր ընթացաւարտ աշակերտներ ջահը մասնաւոր արարողութեամբ փոխանցեցին զիրենք յաջորդող կրտսեր աշակերտի մը, որ պիտի շարունակէ ըլլալ ապագայի արժա-



նաւոր շրջանաւարտ նազարեանցին:

Նախքան վկայականաց բաշխման արարողութիւնը, տեղի ունեցաւ "Fabriano" գծագրութեան մասնակցող աշակերտներուն վկայագիրներու ու մրցանակներու բաշխումը:

Վերջապէս հասաւ հանդիսութեան ամէնէն հանդիսաւոր պահը: 19 աշակերտ - աշակերտուհիներ ստացան իրենց վկայականները, ինչպէս նաեւ այն շրջանաւարտները, որոնք արժանացան ուսման բարձր պատուոյ, պատուոյ եւ վարքի առաջնութեան ստացան մէյ - մէկ մրցանակ:

Վկայականաց բաշխման այս գերազանցապէս յաջող ձեռնարկը արարեցաւ վարժարանի՝ Տնօրէն Պրն. Ծ. Չինչինեանի հուսկ բանքով: Տնօրէնը իր խոր գոհունակութիւնը եւ շնորհակալութիւնը ուղղեց Հ.Բ.Ը.Մ.ի վարիչ մարմիններուն, ուսուցիչներուն եւ ծնողներուն, որոնք ի գին ամէն զոհողութեանց եւ անսահման հաւատքով սատարեցին այս վարժարանին գոյատեւման ու յաջողութեան...: Նաեւ ան շնորհաւորեց նոր շրջանաւարտները եւ մաղթեց, որ անոնք ըլլան միշտ յառաջադէմ, պարտաճանաչ, պատուաբեր ազնիւ հայորդիներ ապագայի...:

Ուրախութեան, յուզումի ու խանդավառութեան մթնոլորտի, ծափահարութիւններու եւ ծաղիկներու յանձնումներով փակուեցաւ հանդէսը, արձանագրելով փայլուն էջ մը եւս իր տարետոմարին վրայ:

Վարձքը կատար բոլոր «Նազարեանցիներուն»:

Թող մեր դպրոցը միշտ մնայ կանգուն ու ծաղկուն:

Թող Բարեգործականը միշտ մնայ կանգուն ու անմար:

Յ.Տ.

Լեւոն Կ. Նազարեան Վարժարանի 2008 - 2009 Տարեշրջանի Ծրջանաւարտներու Անուանացանկ

- ** 1. Ատալեան Կարէն
- *** 2. Անթոնեան Կարօ
- 3. Աուն Փիրայր
- 4. Աւետիսեան Ճէսիքա
- 5. Աւետիսեան Մարիա
- * 6. Պաքալպաշեան Առէն
- 7. Պոտրովեան Նանոր
- 8. Կարապետեան Ռոլանտ
- * 9. Կոստանեան Նանոր
- 10. Հանեան Յովիկ
- *** 11. Փամկոչեան Հորի
- * 12. Ծիպեան Լարա
- 13. Գասպարեան Քրիսթին
- 14. Խաչատուրեան Վարդենիս
- 15. Մավլեան Սեւակ
- 16. Նազգաշեան Կարպիս
- 17. Սեֆերեան Ալին Մարիան
- 18. Սերշեան Կարպիս
- 19. Սիսլեան Լարա
- *** Գերազանց (95 եւ ւելի)
- ** Ուսման Բարձր Պատուոյ Յիշատակութիւն (92-94.99 միջին)
- * Պատուոյ Յիշատակութիւն (88 - 91.99 միջին)

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ԽԻՍՏ ՇԱՀԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ՏՔ. ԵՐՈՒԱՆԴ ԶՕՐԵԱՆԻ ՀԵՏ

Որքա՞ն մեծ է աշխարհ, եւ այսօր՝ ինչքա՞ն փոքրացած է այդ: Հեռու եւն աշխարհագրական երկիրներ: Երբեմն՝ սուկ անուններ եւն անոնք մեզի համար, միայն, բայց յաճախ մօտ՝ մեր աչքերուն առջեւ:



Տիար Ժ. Թիֆեէքճեան, Տք. Ե. Զօրեան, Տէր եւ Տիկ. Կ. Ծղղլեան, Տիար Ն. ֆըստըքճեան

Հեռահաս եւն անցնող դարերը եւն անոնց պատմութիւնները, որոնց անցուդարձերը պրպտելու համար կարիքն ունիս հաստատար հանրագիտարաններու, կամ՝ գրադարաններու:

Հեռու եւն քու հայրենիքէդ. եւն գուցէ անձանօթ եւն անոր պատմութեան, աշխարհագրութեան, լեզուին, մշակոյթին, արուեստներուն:

Ճակատագրի խա՞ղ: Թերեւս:

Արագութեան ու համակարգչային սա դարուն, արդեօ՞ք կարելի է սպասիմիլ առտնին պայմաններու եւն օգտագործել արդէ՞ն հնամաշ գրամեքենայ, բանտարկուած տանդ խուցին մէջ, երբ համաշխարհայնացումը կամաց-կամաց կը թակէ քու դուռդ եւն կը սպառնայ քու անունիդ, ինքնութեանդ, պատկանելիութեանդ, եթէ տակաւին սպասիմիս թուղթէ «շերեփ»իդ, մեկուսացած ու ամփոփուած նախկին պատեանիդ մէջ:



Կը խօսի Տիկ. Սիլվա Լիպարիտեան

Եթէ հարիրերեքամեայ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, իր հիմնադրութեան տարիներուն ու անկէ վերջ սատար հանդիսացաւ հայ գեղջուկին, բանուորին ու մշակին, որպէսզի ան մնա՛յ տէրը՝ իր սեփական հողին ու հայրենիքին,

Եթէ Հ.Բ.Ը.Միութիւնը տէր կանգնեցաւ հայ որբերուն ու որբեայրիներուն՝ Եղեռնի տարիներուն, կատարելով որբահաւաք, հիմնելով որբանոցներ ու դարմանատուներ, հիւանդանոցներ ու հիդաւաններ, միշտ մեկնելով նոյն տեսլականէն:

Եթէ աւելի ուշ, զարկ տալով գիտութեան ու դաստիարակութեան առաքելութեան, մեծ ճիգով հիմնադրեց բազմատասնեակ վարժարաններ՝ սփիւռքի բոլոր տարածքներուն վրան, վառ ու կենդանի պահելու համար հայ լեզուն ու մշակոյթը,

Եթէ ան, հաւատալով իր կոչումին, կառուցեց ու բարձրացուց Երիտասարդական, Մշակութային ու Մարզական Կեդրոններ, շատ մը մաշրաքաղաքներու մէջ, հաւատալով երիտասարդութեան ուժին ու սպագայի իմաստով կարեւոր դերին, որպէսզի կառչած մնան իրենց պորտալարերուն:

ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

(Շար.ը՝ էջ 6)



VIRTUAL ՅԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՅԱՄԱՑԱՆՑՈՒՄ ԿԸ ՄԻԱՒՈՐԻ ՍՓԻՒՔԱՅԱՅԵՐԻՆ

ՅԲԸՄ-ի հերթական կրթական ծրագիրը

Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործունեութիւնը աւելի քան հարիւրամեայ պատմութիւն ունի: Այդ ընթացքում կազմակերպութիւնը Յայաստանում եւ սփիւռքում հիմնել է բազմաթիւ մշակութային, առողջապահական, հասարակական կեդրոններ: ՅԲԸՄ-ն, ի թիւս այլ գործունեութիւնների, կրթական հաստատութիւններ հիմնելու լաւ համբաւ է ձեռք բերել: ՅԲԸՄ-ի կրթական ծրագրերի օրակարգում է Երեւանում վիրտուալ համալսարանի ստեղծումը, որի պաշտօնական մեկնարկը տեղի ունեցաւ երէկ Յայաստանի ամերիկեան համալսարանում: «Վիրտուալ ուսուցումը տարբերում է աւանդականից իր հոգեբանութեամբ, դասաւանդման նրբութեամբ: Բարձր որակ ապահովելու եւ չափանիշներին համապատասխանելու նպատակով համալսարանի մանկավարժները 6-ամսեայ պրակտիկա են անցել: Սա Յայաստանում վիրտուալ համալսարան հիմնելու առաջին փորձն է, որ, յոյսով ենք, կը պսակուի յաջողութեամբ», նկատում է պրոֆէսոր, վիրտուալ համալսարանի հիմնադիր նախագահ Երուանդ Զօրեանը:

Մինչ համալսարանի հիմնումը Զօրեանն այցելել է տարբեր գաղութներ, շփուել երիտասարդների հետ, պարզել կրթական ոլորտի հիմնախնդիրները:

«Փաստեցինք, որ տարեց մարդիկ էլ են ցանկանում սովորել, վերլիշել պատմութիւնը, մշակոյթն ու ճարտարապետութիւնը: Յենց այդ պատճառով տարիքային խտրականութիւն չկայ: Յամալսարան կարող են ընդունուել 17-82 տարեկան անձինք», նկատում է նա: Ուսուցումն ընթանալու է վեց լեզուներով՝ նպատակ հետապնդելով ուսուցման ծրագրերում ներգրաւուել աւելի շատ մարդկանց: Ամառային շրջանի ժամանակ գրանցուել է աւելի քան 382 անհատ աշխարհի տարբեր երկրներից: Ամառային կիսամեակի ուսուցումն ընթանալու է անվճար, աշնանային կիսամեակի համար կը սահմանուի սիմուլիկ գումար՝ 199 դոլար: Իւրաքանչիւր կիսամեակը կտեւի 9 շաբաթ: Շաբաթական դասերից բացի ուսանողները կարող են քննարկումներ անցկացնել, շփուել ախարհի տարբեր անկիւններում հայրենակիցների հետ: Յամալսարանի աշխատակիցները նկատում են, որ համալսարանի պաշտօնական էլեկտրոնային փոստն ամէն օր թարմացում է նոր նամակներով, շնորհաւորական ուղերձներով ու մաղթանքներով: «Սա իմ հայերէնը սովորելու եւ լաւացնելու մեծ հնարաւորութիւն է: Երկու տարեկան դուստրս ինձ հետ կրկնում է բոլոր բառերը», ասում է Կարինէն, որը բնակուում է Ուրուգուայում եւ արեւմտահայեցրէն սկսնակների համար դասընթացը ուսանում իսպաներէնով:

Ուսանողներին ոգեւորելու նպատակով կազմակերպիչները մի շարք առաւելութիւններ, արտօնութիւններ են սահմանել՝ բարձր միաւորներ ստանալու կամ ՅԲԸՄ անդամ լինելու դէպքում:

Իւրաքանչիւր դասարանում նախատեսուած է 12 աշակերտի մասնակցութիւն: Երուանդ Զօրեանը նկատում է, որ մասնակցութեան յայտերը հիմնականում գալիս են ամենամեծ գաղութներից՝ ԱՄՆից, Ռուսաստանից, Ֆրանսիայից: Յայաստանն այդ առումով ցանկում գրաւում է 5-րդ հորիզոնականը:

Սփիւռքի փոխնախարար Ստեփան Պետրոսեանը ծրագիրը համարում է յաջողուած փորձ 21-րդ դարում հայեցի կրթութիւն եւ դաստիարակութիւն ապահովելու առումով: «Սփիւռքում հայոց լեզուն չափազանց ծանր վիճակում է: Յայկական դպրոցները հիմնականում վճարովի են, հետեւաբար ֆինանսապէս անապահով ծնողները չկարողանալով ուսուցման համար վճարել՝ երեխաներին հանրային դպրոց են տալիս, որտեղ հայոց լեզու, գրականութիւն, պատմութիւն առարկաները չեն անցնում: Այս ծրագիրը հնարաւորութիւն կը տայ յաղթահարելու մի շարք խոչընդոտներ առաջին հերթին հայապահպանման ոլորտում: Վստահ եմ, որ վիրտուալ համալսարանի աշխարհագրութիւնը ժամանակի ընթացքում կը մեծանայ»:

ՅԱՄՍԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

(Շարունակուած 5րդ էջէն)

Եթէ ամբողջ դար մը, սատար հանդիսանալէ ետք աշխարհատարած սփիւռքահայ գաղութներու հոգեւոր, կրթական, մշակութային կարիքներուն, վերջին քսան տարիներուն փրկարար ձեռք երկարեց ան՝ երկրաշարժ տեսած, անկախութեան պայքար մղած, ու ի վերջոյ անկախացած մեր միևնույն հայրենիքին, իր բազմաթիւ ու պատուաւոր ներդրումներով զարգացնելու համար մեր հայրենիքը եւ բարձրացնելու համար հայրենի ժողովուրդին կենսամակարդակը,

Ահա, այսօր, միշտ մեր ժողովուրդի կարիքներուն ու նաեւ ժամանակի պարտադրած պարտաւորութեան հետ քայլ պահող Հ.Բ.Ը.Մ.ի հաւատք ու տեսիլք ունեցող ղեկավարութիւնը, օրերս, տեսնելով երկրագունդի վրայ տիրող ու զարգացող պայմանները, համաշխարհայնացման քամիին արագութիւնը, քայլ պահելու համար դարու պահանջներուն հետ, ու կարելորելու համար հայութեան ինքնութիւնը, գոյութիւնը եւ սատար հանդիսանալու համար ցիրուցան եղած, ամբողջ աշխարհով մէկ տարածուն հայազգի զաւակներուն, լուսաւորեալ այս ժամանակաշրջանին, հաւատալով ու համոզուելով համակարգիչի եւ կայքէջերու բերելիք նպաստներուն, կը հիմնադրէ «Հայկական Համացանցային Հեռավար Քոլէճ»ի ծրագիրը, այսպիսով նոր էջ մը բանալով իր պատմական առաքելութեան մէջ:

Նման դժուար, պատասխանատու, բազմաբովանդակ ու տարածուն, նոյնժամանակ գիտական արդիական բարձր կարողականութիւն պարտադրող այս իմաստուն ծրագիրը, բնականաբար պէտք էր ունենար նոյնքան գիտակից, ատակ, գործունեայ, գիտնական պաշարով հմտացած եւ մտքի կարկիւնը լայն բացած գիտակից, լուրջ ու նոյնքան պատասխանատու հեղինակաւոր անձնաւորութիւն մը:

Բարեբախտութիւն է, որ վերոյիշեալ բացառիկ կարելորութիւն ներկայացնող, ազգային ու հայրենասիրական, ինչու չէ՛ միութենական իմաստով հպարտութիւն ներշնչող այս նախաձեռնութիւնը, իրագործած է Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, Տր. Երուանդ Զօրեանը, լեւ երկարատեւ, տքնաջան ու համբերատար խնամեալ աշխատանքի:

Արդարեւ, շնորհիւ Տր. Երուանդ Զօրեանի անձնական ճիգերուն, ու Հ.Բ.Ը.Մ.իութեան անմիջական հովանաւորութեան, այսօր կեանքի կոչուած է «Հայկական Համացանցային Հեռավար Քոլէճ»ը, ուր այս մեծ, բայց շնորհիւ համակարգիչի ու կայքէջի ընձեռած բարիքներուն փոքրացած աշխարհի մէջ, վաղը քու ափիդ մէջ պիտի ըլլայ գիտական, մշակութային, գրական, տեղեկատուական, պատմական, աշխարհագրական ամէն գիտելիք ու մանրամասնութիւն, վեց լեզուներով, գոհացնելու համար խոշոր ցամաքամասերու վրայ տարածուն հայրենակիցներու լեզուական պահանջները, զանոնք միացնելու համար արմատներուն, անոնց ջամբելով բարձրամակարդակ գիտելիք՝ մասնագէտ անձնաւորութիւններու կողմէ:

Գրեթէ տարիքային սահմանում չունեցող (Երկրորդական վարժարանի մակարդակ ու աւելի) այս ծրագիրը, վստահաբար հնարաւորութիւն պիտի ընծայէ շատերու, որպէսզի շարունակեն իրենց բարձրագոյն ուսումն ու զարգացումը, նոյնիսկ իրենց բնակարաններէն ներս, ապագային տիրանալու համար համապատասխան վկայականներու:

Երկուշաբթի, 6 Յուլիս 2009-ի երեկոյեան, կազմակերպութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի Կրթական Յանձնախումբին, հոծ բազմութեան մը ներկայութեան, Տր. Երուանդ Զօրեան նորաստեղծ հեռավար Քոլէճի ներկայ ու ապագայ ընթացիկ աշխատանքներուն մասին տուաւ սպառիչ բացատրութիւններ, թուելով Քոլէճի ստեղծման նպատակը, մասնակցութեան պայմանները, բերելիք առաւելութիւնը, ազգային իմաստով թողնելիք կարելորութիւնը եւ անշուշտ դերը՝ հայ կեանքէ եւ հայ իրականութենէն ներս:

Ան անդրադարձաւ Քոլէճի գտած կարելորութեան՝ Հայրենի Իշխանութիւններու, Կրօնական բարձրաստիճան ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ գիտնական ու մտաւորական զանգուածներու մօտ, որոնք իրենց գնահատանքը յայտնած են այս եզակի իրագործումին ի տես, որ Բարեգործականի պատւաբեր առաքելութիւններէն վերջինը (առ այժմ) կը հանդիսանայ:



Կը զեկուցէ Տր. Երուանդ Զօրեան

Հանդիպման բացման խօսքը կատարեց, Հ.Բ.Ը.Մ.ի Ծրջանակային Յանձնաժողովի ատենադպիր եւ Կրթական Յանձնախումբի ատենապետուհի՝ Տիկին Սիլվա Լիպարիտեան, կարելորելով դերն ու տեղը կրթական այս նոր ծրագրին ու ծանօթացնելով Քոլէճի հիմնադիրն ու տնօրէնը՝ յարգելի ու պատուական հայ Տր. Երուանդ Զօրեանը:

Իսկ փակման խօսքը ըրաւ՝ Հ.Բ.Ը.Մ.ի Ծրջանակային Յանձնաժողովի փոխ ատենապետ եւ Հ.Ե.Ը.Կերակցութեան Կեդր. Վարչութեան ատենապետ՝ Պրն. Կարօ Ծղղըլեան, գնահատանք տալով Հ.Բ.Ը.Մ.իութեան, որ իր ծրագիրներով կը հարստացնէ եւ կ'իմաստաւորէ հայու գոյութեան իմաստը՝ իր նոր-նոր ներդրումներով:

Չոյզ արտայայտողներն ալ դրուատեցին առնուած բացառիկ ու յատուկ քայլը, եւ մասնաւորաբար գնահատեցին Տր. Երուանդ Զօրեանի անկոտրուն կամքը, համբերատար աշխատանքը եւ ծառայասիրական ազնի ոգին, որ ոչ միայն հպարտութիւն կ'առթէ, այլ՝ կը պարտաւորէ՝ բացառիկ յարգանք՝ բանի եւ գործով:

Վստահ ենք, որ մօտիկ ապագային, հետաքրքիր հայրողիներ պիտի աճապարեն մուտք գործել այս նոր Քոլէճի «փոքրիկ» դռնէն ներս, զարգացնելու համար իրենց ցանկացած գիտելիքները, որոնք հիմնուած են համալսարանական ծրագիրներու պայմանաւորութեան ու պարտաւորութեանց վրայ, ուր կրնաս դառնալ կանոնաւոր ուսանող, ունկնդիր ուսանող, կամ՝ ազատ ուսանող, հեռակայ՝ բայց կանոնաւոր ու բժախնդիր աշխատանքային եղանակով, ամբարելէ ետք անսահման պաշար:

Արդ, բարի երթ եւ կանաչ ճանապարհ՝ Հ.Բ.Ը.Մ.ի նոր ու այժմէական առաքելութեան...:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐՇԱՐԱՆԸ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԸ յայտարարում է 2009-2010 ուսանողական տարուայ Ը Ն Գ ՈՒ Ն Ե Լ ՈՒ Թ Ի Ի Ն

Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարան եւ ընծայարան կարող են ընդունուել ՀՀ եւ արտասահմանեան երկրների քաղաքացիներ, ովքեր ունեն միջնակարգ, թերի միջնակարգ (կամ աւելի բարձր) կրթութիւն եւ զաւակն են Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ ովքեր յաջողութեամբ կը յանձնեն ընդունելութեան քննութիւններ հետեւեալ առարկաներից.

1. Հայոց լեզու (գրաւոր, հարցարանով)
2. Հայ գրականութիւն (բանաւոր)
3. Հայոց պատմութիւն (բանաւոր)
4. Երաժշտութիւն (ձայնային տուեալների ստուգում)

Գիմումները տրուում են Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի եւ ընծայարանի տեսուչի անունով՝ ներկայացնելով ներքոյիշեալ փաստաթղթերը.

1. Գիմում
3. Միջնակարգ, թերի միջնակարգ (կամ աւելի բարձր) կրթութեան վկայական

3. Բնութագիր (դպրոցի տնօրէնից)
4. Չինուորական դրութեան մասին փաստաթուղթ (բնօրինակը)
5. Ծնողների համաձայնագիրը
6. 2 լուսանկար (3X4)
7. Անձնագրի պատճէն
8. Ինքնակենսագրութիւն
9. Երաշխատրագիր թեմի առաջնորդից կամ շրջանի հոգեւոր հովուից
10. Տեղեկանք բնակավայրից
11. Սկրտութեան վկայական

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ Գեորգեան Հոգեւոր Դեմարանի քարտուղարութիւն:

Գիմումներն ընդունում են ամէն օր, բացի Կիրակի օրերից, Յուլիսի 1-30-ը, ժամը 10:00-16:00 (Շաբաթ օրը մինչեւ ժամը 13:00):

Հասցէ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գեորգեան Հոգեւոր Դեմարան: Հեռախօս (010) 517-185, (010) 517-180:

Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի եւ ընծայարանի Տեսչութիւն

Բ Ա Ր Ի Լ Ո Յ Ս

- Լիբանանահայ մշակութային կեանքը եռուն կարգավիճակի մեջ կը գտնուի:

- Շատ ճիշդ է եւ մանաւանդ կը յիշեցնէ անցեալի փառապանծ օրերը:
- Մեծապէս գնահատելի են մշակութային միութիւններու ծաւալած գործունէութիւնը: Երգչախումբեր, թատերախումբեր, պարախումբեր, գրական ասուլիսներ, կլոր սեղաններ, հաւատաք կամ ոչ հայ գիրքի նոր հրատարակութիւններ:
- Իսկապէս բացառիկ երեւոյթ է:
- Բացառիկ այս օրերուն համար, մանաւանդ որ քաղաքական եւ տնտեսական ճգնաժամը իր ստուերը չզած է մեր առօրեային վրայ:
- Հայկական թերթերն ու հանդէսները արդիական նորագոյն միջոցներով եւ յատկապէս մամուլի բժախնդիր, բարձրորակ եւ տքնաջան աշխատանքով կը պայծառացնեն մեր հոգեկան խամրած իրավիճակը:
- Միեւնոյն բարձունքին վրայ կը գտնուին հայ դպրոցները, իրենց կրթական ու դաստիարակչական աշխատանքի կողքին արտաուսումնական միջոցառումներով:
- Չմոռնանք նաեւ մեր եկեղեցին, մեր հաւատքը, մեր հոգեւոր ու ազգային դաստիարակութիւնը:
- Նոյն պատգամով կը գործեն հայրենակցական միութիւնները, բարեսիրական հաստատութիւնները իրենց մատուցած ծառայութիւններով:
- Ինչպէ՞ս կարելի է չյիշատակել մեր մարզական նուաճումները:
- Այս բոլորին կողքին նոյնքան գովելի են նաեւ անհատ նախաձեռնողները իրենց բազմապատկանութիւններով:
- Չըսելու համար թէ ամէն ինչ կատարեալ է, նուազագոյնը պէտք է ընդունինք որ գերազանց ճիշդ կը տարուին եւ յաջողութիւններով կը պսակուին:
- Ապրիլեան եղեռնի եւ Հայոց Յեղասպանութեան ոգեկոչումը միահամուռ մասնակցութեամբ կենդանի վկայութիւնն է լիբանանահայ գաղութի մեծ ներդրումներուն:
- Արդեօք որեւէ բան մոռցա՞ր:
- Չհտեմ թէ ինչ կ'ակնարկես:
- Բնականաբար հայկական չայնասփիռի կայանները:
- Մեր առօրեայ կեանքի անբաժան մասնիկը կը հանդիսանան, ոչ միայն որպէս լոկ երգի եւ երաժշտութեան ունկնդրութեան, ժամանց կամ ժամանակաւոր հանգիստի պահեր, այլ՝ որպէս հայ մշակոյթի եւ արուեստի լուսաւոր փարոսներ եւ ամրակոտ կոթողներ:
- Ինչ կը վերաբերի «Վանայ Չայն»ին, ապա երկարատեւ տարիներու ընթացքին եղած է հայութեան անբաժան ընկերակիցը, արուսակիցը, սրտակիցը եւ իր առաքելութիւնը կը շարունակէ նոյն բարձր ոգիով եւ պատասխանատուութեամբ:

- Ի՞նչ կարելի է ըսել «Սեւան» չայնասփիռի կայանի մասին:
- Կապուտաչեայ Սեւան, Կուլալ ու Զինջ Սեւան: Սորափոթիթ այս կայանը տակաւին մանուկ հասակին, տակաւին կաթնակեր, ենթարկուեցաւ խոշտանգումի: 24 ժամեր միայն, 24 ժամ ետք վերստին հնչեց «Հոս Ռատիօ Սեւանն է» քաղցրահնչիւն խօսքերը: Սեւանը կարելի չէ վերածել ափ մը մոխիրի, Սեւանը կարելի չէ աւերել ու քանդել: Այնտեղ էին հիմնադիրները, այնտեղ էին տնօրէնութիւնն ու անձնակազմը, այնտեղ են եւ պիտի մնան բիրաւոր հաւատարիմ ու հարապատ ունկնդիրները: Ոչ թաթարական արշաւանքները, ոչ սելճուքներու արհաւիրքը եւ ոչ ալ թուրքի եթափանքը կրնան լռեցնել Սեւանի չայնը, Սեւանի սիրտն ու հոգին:
- Ի՞նչ կարելի է ըսել յայտագիրներու մասին:
- Դուն շատ հաւանաբար կը հետեւիս միջազգային համբաւ ու ճանաչում ունեցող կայաններու, շատ հաւանաբար տեղեակ են նաեւ թէ անոնք երկարամեայ փորձ ունին, արհեստավարժ մօտեցում եւ բարձրորակ «տեխնիկա»:
- Այո, եւ թիով բաւական շատ են:
- Երիտասարդ «Սեւան»ը ոչ թէ միայն կը մրցի, այլ շատ յաճախ կը գերազանցէ այդ բոլորը:
- Հակառակ սահմանափակ պայմաններու:
- Այո: Բանի որ նուիրումի եւ ծառայութեան ոգին շատ բարձր է, նպատակը վեհ ու վսեմ:
- Ի՞նչ առանձնապատկանութիւններ ունի:
- Առաջին հերթին՝ լսելի դարձնել հայ երգն ու երաժշտութիւնը:
- Իսկ տարբեր յայտագիրներու մասին ի՞նչ կարելի է ըսել:
- «Չաւաթ մը սուրճ»: Շատ սովորական խորագիր: Փորձենք մէյ մը ներթափանցել երեք ժամ տեւողութեամբ այդ յայտագիրի ներաշխարհը: Արուեստ, մշակոյթ, գիտելիքներ, կարգապահ, կրոններ, տեղեկութիւններ, ծանօթութիւններ, բարձրորակ եւ նրբաճաշակ պատրաստութիւն եւ մատուցում: Յաջորդ քայլը պատմութեան էջերն են, անցեալէն այսօր, միջազգային եւ հայկական: Չմոռնանք լրատուական ամբողջական ու մանրամասն հաղորդումները: Շարքը շատ երկար է: Մարզական լուրեր «Նաւասարդ»ի միջոցով: Բաղաքական Չարթօնք, Մեսրոպեան անմահներ, արուեստի անկիւն, սրտբայ կրոն, մտածէ արագ՝ պատասխանէ շիտակ, եկէք անկեղծ խօսինք եւ տակաւին նորանոր յայտագիրներու եւ ծրագիրներու երկար շարք:
- Իսկապէս գնահատելի է:
- Ընտրակալութիւն Սեւանցիներ, շնորհակալութիւն անձնակազմի անդամներ, աշխատակիցներ եւ յատկապէս սիրելի ու հաւատարիմ ունկնդիրներ, որ չեն մեծ սիրով ու անկեղծութեամբ կանգուն կը պահէք չեր, մեր եւ բոլորին ուստի կայանը:

Շեղաւազ/զ

Ն Շ Մ Ա Բ

Յոյժ գնահատելի է լիբանանահայ մշակութային միութիւններու ծաւալած բեղմնաւոր գործունէութիւնը: Գաղութը վերակենդանացած է: Բեմահարթակներու վրայ կը տեսնենք միութենական երգչախումբեր, նուագախումբեր, պարախումբեր, թատերախումբեր եւ անհատ կատարողներ, որոնք կը յիշեցնեն անցեալի փառաւոր օրերը:

Այս բոլորին առընթեր հարկ կը համարենք անդրադառնալ կարգ մը երեւոյթներու մասին: Վերջին շրջանին համազգային կրթական եւ մշակութային միութիւնը հանրութեան ներկայացուց «Չարլի Չափլին» ստեղծագործական հսկայական աշխատանքը: Հանդիսատեսը եւ մամուլը մեծապէս արժեւորեց եւ գնահատեց այս եզակի միջոցառումը: Մենք ալ մեր հերթին ջերմապէս կը շնորհաւորենք միութիւնն ու մասնակից բոլոր արուեստագետները:

Հարցը կը վերաբերի լիբանանեան Էլ.Պի.Սի. հեռատեսիլի կայանին «Աժանտա» յայտագիրին, որուն մէկ մասը նուիրուած էր «Չարլի Չափլին»ին: Միութեան ներկայացուցիչներ ամբողջական ձեւով տուին Միութեան հակիրճ պատմականը եւ բացատրութիւններ, տեղեկութիւններ «Չարլի Չափլին»ի աշխատանքին մասին: Երբ հաղորդավարուին հարց տուաւ մասնակից պարախումբին մասին եւ խնդրեց նշել անունը, պատասխանը բնականաբար «Քնար» էր: Հաղորդավարուին չբարարարուեցաւ եւ խնդրեց «Քնար»ի նշանակութիւնը: Միութեան ներկայացուցիչը առանց տարակուսանքի պատասխանեց՝ «Թռչունի տեսակ է»:

Այսօր, հայկական երաժշտական գործիքները գործադուլ եւ հացադուլ յայտարարած են:

ՏԷԳ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մի մոռնաք «KOHAR» 165 հոգիւնց խումբին ելոյթը Հալեպի մէջ, 16 Յուլիսին: Շատ սահմանափակ տոմսեր մնացած է:
 Շքեղ օթոքարով երթ ու դարձ, հիւրասիրութիւն եւ ներառեալ մուտքի տոմսը, միայն՝ 35\$ ամերիկեան:
 Աշճեան թուրք: Հեռ. 01-261177, 01-240654 եւ 03-233978

Մ Ո Ւ Տ Ո Ւ Ֆ Ո Ւ # 75

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններով (3x3): Իւրաքանչիւր քառակուսի մէջ թուանշան մը գետեղելի՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ ունենայ 1-էն 9 թուանշանները: Իւրաքանչիւր թուանշան ՄԷԿ ԱՆԳԱՄ գործածել: Սկսելու համար կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

	5	8				1	4	
				2				3
	2			4		6		9
6	4				2			
			3				4	
			3				8	1
1		4		3			2	
8				5				
	6	5				3	1	

3	7	2	5	6	9	8	4	1
1	4	5	8	7	3	6	9	2
8	6	9	1	4	2	7	5	3
7	5	3	9	8	4	1	2	6
2	1	4	7	5	6	9	3	8
6	9	8	3	2	1	5	7	4
4	2	1	6	9	5	3	8	7
5	8	6	2	3	7	4	1	9
9	3	7	4	1	8	2	6	5

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» Համաշխարհային Ցանձնեց Արշակ Մադոյեանին և Վահագն Ստամբուլցեանին

Յուլիսի 3-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ տեղի ունեցաւ հայագէտ Արշակ Մադոյեանի եւ երգեհոնահար Վահագն Ստամբուլցեանի մեծարման հանդիսութիւնը: Հայրենիքին, հայ մշակոյթին եւ Հայ Առաքելական Եկեղեցուն բերած ծառայութիւնների համար Հայրապետական կոնդակով նրանք արժանացան Հայոց Եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանին:

Հանդիսութեան ընթացքում նշանաւոր երգեհոնահար Վահագն Ստամբուլցեանի կեանքին եւ գործունէութեանն անդրադարձաւ կոմպոզիտոր, կոմիտասագէտ Արթուր Ծահնագարեանը: Նա իր խօսքում նշեց, որ խորհրդային տարիներին Վահագն Ստամբուլցեանի խիզախութեան շնորհիւ եկեղեցուց դուրս բազմաթիւ երաժշտասերներ հաղորդ դարձան հայ հոգեւոր երաժշտութեանը եւ Հայոց Եկեղեցու անմահ գանձերին: Բանախօսը կարեւորեց նաեւ մեծարեալի մանկավարժական բեղուն գործունէութիւնը Կոմիտասի անուան կոնսերվատորիայում:

Հայագէտ Արշակ Մադոյեանի անցած ուղին ներկայացրեց Գեորգեան Հոգեւոր ճեմարանի դասախօս Պետրոս Յովհաննիսեանը: Նա ընդգծեց մեծարեալի նուիրումը հայ մշակոյթին եւ հայ մատենագրութեանը՝ կարեւորելով նրա հայագիտական աշխատութիւնները եւ գիտամանկավարժական գործունէութիւնը:

Այնուհետեւ «Էջ Միածինն ի Հօր» հոգեգմայլ շարականի երգեցողութեան ներքոյ Վեհարանի հանդիսութիւնների սրահ բերուեցին Հայրապետական Սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեցին Մայր Աթոռի դիւանապետ Տ. Արշակ եպիսկոպոս աչատրեանը եւ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճեանը:



«Ուրախութիւն է Հայրապետիս համար բարձր գրնահատանքի արժանացրել Ձեզ՝ հայագիտութեանն ու հայ գրականութեանը արգասատու ծառայութիւն մատուցած նուիրեալ հայրորդոյ: Բեղուն է գիտական եւ մանկավարժական երկարամեայ Ձեր գործունէութիւնը եւ երախտարժան՝ Ձեր վաստակը, որ արդիւնք է անխոնջ գիտնականիդ տարիների անդուլ ու ջանադիր աշխատանքի: Այսօր Մայր Հայրենիքում ու նրա սահմաններից դուրս լայնօրէն ծանօթ են հայ հին եւ արդի գրականութեանը եւ մեր ժողովրդի պատմութեանը նուիրում Ձեր գրքերն ու յօդուածները, որոնցում արտացոլուած է նաեւ Ձեր սերը մեր ժողովրդի ու Հայրենիքի, մեր երանաշնորհ հայրերի աւանդների հանդէպ: Դուք առանձնակի կարեւորութիւն էք ընծայել եկեղեցական մեր հարուստ ժառանգութեան ուսումնասիրմանը՝ հրատարակելով արժէքատու աշխատութիւններ Հայ Եկեղեցու եւ անուանի հայ եկեղեցականների վերաբերեալ եւ աշխարհաբարի վերածելով բազմաթիւ գործեր մեր հոգեւոր գրականութեան գանձարանից», - ասում է Արշակ Մադոյեանին ուղղուած հայրապետական կոնդակում:

«Ձեր կեանքը ամբողջական նուիրում ու ծառայութիւն է երաժշտական արուեստին: Տասնամեակներ շարունակ Դուք մեր ժողովրդին էք մատուցում Ձեր բարձր ու գեղեցիկ արուեստը՝ սիրով ու հիացմունքով համակելով ունկնդիրներին երգեհոնային երաժշտութեան հանդէպ: Ուրախ ենք հաստատելու, որ Ձեր կատարումներում յատուկ տեղ են գրաւել հայ հո-

գեւոր երաժշտութեան գանձերը: Այսօր էլ, տասնեակ տարիներ անց հայրողեաց յիշողութեան մէջ թարմ են տաղանդաշատ երգչուհի Լուսինէ Չաքարեանի հետ Ձեր համատեղ ելոյթների անկրկնելի տպաւորութիւնները», - նշում է Վահագն Ստամբուլցեանին ուղղուած Սրբատառ կոնդակում:

Շնորհակալութիւն յայտնելով Վեհափառ Հայրապետին գնահատանքի եւ ուշադրութեան համար՝ հանդիսութեան մեծարեալները շեշտեցին, որ պիտի շարունակեն իրենց անսակարկ ծառայութիւնը հայ ժողովրդին, հայ մշակոյթին եւ Հայ Առաքելական Եկեղեցուն:



Վերջում ներկաներին իր օրհնութեան խօսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Անդրադառնալով մեծարեալներին կեանքին՝ Նորին Սրբութիւնը նշեց, որ այն եղել է համակ սէր եւ նուիրում իրենց գործին եւ հայ մշակոյթին: Հայոց Հայրապետը ստեղծագործական անհուն եռանդ մաղթեց նրանց, որպէսզի իրենց հաւատատու եւ հայրենասէր շնչի ներքոյ դեռ երկար տարիներ հասակ առնեն եւ դաստիարակուեն բազում հայորդիներ:

Հանդիսութեանը գեղարուեստական յայտագրով հանդէս եկան «Նոր անուններ» խմբի պատանի երաժիշտները:

Միջոցառմանը ներկայ էին Մայր Աթոռի միաբաններ, գիտութեան եւ մշակոյթի գործիչներ:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի Հայ Կաթողիկէ վարժարաններէն աշակերտական պատուիրակութիւն մը շուտով՝ Յուլիս 10-17-ը պիտի մեկնի Հայաստան, մասնակցելու համար Հայաստանի Հանրապետութեան Կըրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան կողմէն կազմակերպուող հայագիտական գիտելիքներու համահայկական մրցոյթին:

Այս ձեռնարկին նպատակը հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի իմացութիւնը դպրոցականներուն քով խթանելն ու խրախուսելն է, ինչպէս նաեւ առողջ մրցակցութեան պայմաններու մէջ անոնց գիտելիքներն ու ստեղծագործական կարողութիւնները դրսեւորելու համար առիթ տալն է: Այս մրցոյթը նաեւ առիթ կը հանդիսանայ տարբեր երկիրներու մէջ բնակուող հասակակիցներուն ծանօթացումին:

Վեց աշակերտներէ բաղկացած խումբին պիտի ուղեկցի Գեորգ Հարպոյեան վարժարանի ուսուցչուհիներէն Օրդ. Թամար Յակոբեան:

Մրցոյթը տեղի պիտի ունենայ Երեւանի մէջ: Իր մասնակցող աշակերտական խումբերը պիտի իջեւանեն Ծաղկաձորի «Երիտասարդական Կեդրոն»ին մէջ:

ԼՐԱՏՈՒՄԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՎԱՐՇԱՐԱՆՆԵՐՈՒ
ՏՆՕՐԵՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ